ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-------» ---------- 2017թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող 130.9քմ մակերեսով տարածքը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.07.2004թ. հ.1459709 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ժամկետով տրամադրել «Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՈՄՈՍ/Հայաստան/, «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» և «Վասպուրական» հայրենակցական» հասարակական կազմակերպություններին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող 130.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, 3 տարի ժամկետով, տրամադրել տարածքի փաստացի օգտագործող «Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՈՄՈՍ/Հայաստան/, «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» և «Վասպուրական» հայրենակցական» հասարակական կազմակերպություններին:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի հ.24-ի հ.193-Ա և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 9-ի հ.210-Ա որոշումների հիման վրա քննարկվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով արդեն իսկ տրամադրված է եղել նշված կազմակերպություններին և վերջիններիս հետ կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի գործողության ժամկետը սույն թվականի հունիսի 30-ին ավարտվում է:

Նշված կազմակերպությունների նպատակն է նպաստել հուշարձանների և պատմական վայրերի պահպանությանը, ամրակայմանը, վերականգնմանը և օգտագործմանը ժամանակակից պահանջների ու միջազգային օրենքների համաձայն՝ ազգային և միջազգային մակարդակներում: Կազմակերպությունները հավաքագրում, ուսումնասիրում, հրատարակում և տարածում են հուշարձանների և պատմական վայրերի պահպանության, ամրակայման, վերականգնման և օգտագործման ոլորտում գիտական հիմնախնդիրները և ժամանակակից մեթոդները, մասնակցում են միջազգային համագործակցությանը և աջակցում հուշարձանների և պատմական վայրերի գիտատեղեկատվական կենտրոնների զարգացմանը:

Կազմակերպությունները համագործակցում են օտարերկրյա պետությունների նմանատիպ կազմակերպությունների հետ և նպաստում պատմամշակութային ժառանգության արժեքների հաշվառման, վավերագրման, պահպանության, ամրակայման վերականգնման և բարեկարգման բնագավառների զարգացման հիմնախնդիրներին:

Կազմակերպությունները մասնագիտական աշխատանք են իրականացնում ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև նրա սահմաններից դուրս գտնվող հայկական ժառանգության պահպանության և հանրահռչակման բնագավառում՝ գործունեության առանցքում դնելով միջազգային առաջատար փորձը, օրենսդրական գործիքները և մեթոդոլոգիան:

Հաշվի առնելով ընկերությունների կողմից իրականացվող գործունեության կարևորությունը՝ ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող 130.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ժամկետով հասարակական կազմակերպություններին տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ